

### ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

## ՎԻԵՆԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ «ՄԱՏԵԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԶԵՌԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ- ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանում պահպող մի շարք ուշ միջնադարյան ձեռագրերի հեղինակ է Տրիեստի Մխիթարյան միաբանության<sup>1</sup> անդամ, հ. Անտոն Ռուզարտաշյանը։ Նրա անունը ցարդ անհայտ է մնացել հայ երաժշտության պատմությանն այն պարզ պատճառով, որ նրա երաժշտագիտական և այլ բնույթի աշխատություններն անտիպ են և երբեք չեն զրվել զիտական շրջանառության մեջ։ Հարկ է նշել, որ 1700 թվականից հետո ստեղծված ձեռագրերի ցուցակը վիեննայի Մխիթարյանները լույս բնծայեցին միայն վերջին տարիներին<sup>2</sup>։ Ա. Ռուզարտաշյանը հեղինակ է մի քանի ստվարածավալ ձեռագրի, որոնք ցույց են տալիս նրա հետաքրքրությունների լայն շրջանակը։ Դրանք են՝ «Ուսումն ճարտարապետութեան» (Ճեռ. № 1457), «Գիրք Պատկերաց ճարտարապետութեան» (№ 1458), «Գիրք Պատկերաց մաթիմաթիրական ուսումնաց, Գործնական երկրաշափութեան, Երաժշտութեան և Կանոնական կտրութեանց» (№ 1459), «Գիրք Պատկերաց Հանդիպակահայեցութեան, Ստուերագրութեան, Մեքենականութեան» (№ 1460), «Ուսումն մաթէմաթիգական» (№ 1461) և «Մատեան երաժշտականութեան» (№ 1456)։ Այս ձեռագրերն ստեղծված են 1780—1801 թթ., ըստ որում, ամենից ուշ ստեղծված է «Մատեան երաժշտականութեան» ձեռագիրը, այսինքն հեղինակի շուրջ քսանամյա զիտաթարգմանական դործունեության վերջում միայն<sup>3</sup>։ Նշանակում է, հեղինակն իր հետաքրքրությունների ընդարձակ ոլորտում երաժշտության բնագավառին անդրադարձել է առավել հասուն տարիքում և արդեն թարգմանական աշխատանքի մեծ փորձ ունենալով։ «Մատեան երաժշտականութեան» ձեռագիրը մի ստվարածավալ աշխատություն է, որ կրում է հետևյալ խորագիրը. «...ի շորս զիրս բաժանեալ, այս է՝ ի հանրական երաժշտութիւն, յարհեստական հնչողութիւն, ի թուարանական ներդաշնակալուր թուոց համեմատու-

1 Վիեննայի Մխիթարյանները, ինչպես հայտնի է, վենետիկի Մխիթարյան միաբանությունից զատվելով, 1773—1810 թթ. հաստատվեցին նախ Տրիեստում, իսկ 1811-ին՝ Վիեննայում։

2 Տե՛ս «Հանդես ամսօրյաց, 1977—1983 թթ., նաև՝ «Յունակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա», հ. Գ., կազմեց Հ. Օգոստինոս վրդ. Մեքուլյան, Վիեննա, 1983։ (Ձեռագրերի համարները՝ ըստ Վիեննայի Մատենադարանի ձեռագրացակի)։

3 Նշելի է, որ «Գիրք պատկերաց Ա-Դ» կոչվող ձեռագրում ևս, որ ընդդրկում է զիտության մի շարք տարրեր բնագավառներ, ի տարբերություն մյուաների, որոնք զրված են 1780—1781 թթ., երաժշտության վերաբերող բաժինը դարձյալ դրված է 1800-ին։

թիւն, և ի ըստ արդեաց կերպի և ոճոյ երաժշտականութիւն։ Յօրինեալ ի պրոցն նախնի և յարդի մեծանուն երաժիշտ հեղինակաց յունաց, լատինաց-ւոց և իտալացւոց, աշխատասիրութեամբ հայր Անտոն Վարդապետի Կոստանդնուպոլիսից հւշգարտաշեան, յաշակերտէ Մխիթարայ մեծի բարբունապետի և Արքայի։ Յամի Տեառն 1801 յԱպրիլի 3 ի Թրիխեստ ի վանս սրբոց վկայիցն, զոր ստացան զնով Հարք Մխիթարեանք ի փառս փրկչին և մօր իւրոյ ի պատիւ, և յուսումն մանկանց Արամեանց դպրատան մերոյաց։ Այս տիտղոսաթերթից երեսում է, որ ձեռագրիս հեղինակն օգտվել է ինչպես մի շարք հին, այնպես էլ իրեն ժամանակակից այլազդի հեղինակների աշխատություններից։ Պարզվում է նաև, որ ձեռագրին ստեղծվել է ուսուցողական նպատակով։ Բայտ խորագրի, ձեռագիրը բազկացած է շորս զրբից, սակայն ըստ բովանդակության այն կարելի է զատել երեք մեծ բաժինների։ Դրանցից առաջինը, որի մեջ մտնում են տիտղոսաթերթում նըշված առաջին երեք զլուխները, հիմնականում XVII դ. դիրմանացի հայտնի մաթեմատիկոս, բանասեր և ֆիզիկոս Աթանազիուս Կիրխերի (Kircher) «Musurgia universalis» աշխատության առաջին երեք զլուխների թարգմանությունն է։ Կիրխերի այս աշխատությունը լույս է տեսել 1650 թ. Հոռմում, լատիներեն լեզվով<sup>4</sup>։ Այն բազկացած է 10 զրբից, որոնք համապատասխանաբար կոչվում են՝ «Փիզիոլոգիկա», «Փիլոլոգիկա», «Արիֆմետիկա», «Գեոմետրիկա», «Օրդանիկա», «Մելոտետիկա», «Դիոկրիտիկա», «Միրֆիկա», «Մագիկա» և «Անալոգիկա»։

Այս աշխատությամբ Կիրխերը հանդես է գալիս որպես իր ժամանակի ինքնատիպ մտածողներից մեկը, որը, հենվելով բնական գիտությունների նվաճումների վրա և համադրելով դրան մաթեմատիկայի իր իմացությունն ու արեելագետ պատմաբանի լայն հետաքրքրությունները, աշխատել է գիտական որոշակի հիմքի վրա դնել երաժշտության հետ կապված բազմազան հարցերի ուսումնասիրությունը, մնալով, սակայն, որոշ դեպքերում, սրոլաստիկ մտածողության սահմաններում։ Կիրխերն ուրույն ձեռվ վերարծարծում է երաժշտության բուժիչ հատկությունների մասին հին պատկերացումները, բայց շրավարարվելով դրանով, աղուցում է դրանք նաև աֆֆեկտների տեսության հետ<sup>5</sup>, վերագրելով երաժշտությանը խորհրդավոր հատկություններ։

4 Վիեննայի Մխիթարյան միաբանությունից մենք ստացանք ձեռագրիս, ինչպես նաև «Գիրք պատկերաց Ա-Դ» ձեռագրի Գ. բաժնի մանրաժապավենը, որի համար երախտագիտություն ենք հայտնում Մատենադարանի տնօրենությանը, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյաններին, որոնց բարեհան վերաբերմունքի շնորհիվ ձեռագրերի պատճենները հասան մեզ։ Տե՛ս Վիեննայի մատենադարան, ձեռ. № 1456, էջ 4ա։ (Այսուհետեւ՝ Վ. Ս.):

5 Աշխատության համառոտ տարրերակը 1662-ին լույս է տեսել նաև գերմաներեն լեզվով, իսկ 1690-ին այն ունեցել է լատիներեն և գերմաներեն հրատարակություններ (տե՛ս Die Musik in Geschichte und Gegenwart, Basel-London-New-York, 1958, Bd. 7, s. 937—940; տե՛ս նաև «Музикальная энциклопедия», 1974, т. 2, стр. 804։ Այսուղ աշխատությունը վերնագրված է այսպես։ «Универсальная музыка или Великое искусство со звучанием и диссонансом» (Այսուհետեւ համապատասխանաբար կնշվի՝ Die Music & MЭ):

6 Սա հին հույներից և հատկապես Արիստոտելից եկող «Էթոսի» (բառացի՝ «բնություն») նորովի մեկնաբանումն էր, որ լայն արձագանք էր զանը Կիրխերի ժամանակակիցների և հաշորդների երաժշտատեսական և զեղագիտական գործերում։ այսպես, հնում զանում էին, որ հունական 8 լադերից յուրաքանչյուրը կրում է մարդու վրա ազդելու որոշակի լիցք (ՏԵ՛ս Վ. П. Шестаков, Музикальная эстетика Западной Европы XVII—XVIII веков, М., 1971, стр. 188)։

Հեղինակը տարբերում է ութ հուզական վիճակ, որ ընդունակ է հարուցել երաժշտությունը: Եվրոպական երաժշտության մեջ Աթանազիոս Կիրխերն առաջինն է արծարծել ոճի հասկացողությունը, որով նա բացատրում է ազգային երաժշտության առանձնահատկությունները: Ըստ Կիրխերի տեսության, որևէ ժողովրդի երաժշտության հատուկ է ուրույն ազգային ոճ, որն առաջանում է ազգային բնավորությունից, բնական կերտվածքից ու կլիմայից, ինչպես նաև տվյալ հեղինակի խառնվածքի անհատական առանձնահատկություններից: Կիրխերն առաջարկում է նաև երաժշտություն հորինելու համապարփակ միջոցներ, որոնցով նրա ստեղծած երաժշտական սարքը պետք է ըստ պահանջի արտածեր ցանկացած ոճի երաժշտություն<sup>7</sup>:

Աշխատության վերը նշված տաս գրքերում Կիրխերի հետաքրքրությունների շրջանակը ներառում է երաժշտության բաղկացուցիչների գիտական բացատրությունից մինչև երաժշտությանը երեակայական որակներ վերադրելը: Բնական գիտություններով զբաղվելուց բացի, Կիրխերն իր ժամանակ համարվել է նաև եղիպտական հիերոգլիֆների մասնագետներից մեկը<sup>8</sup>, ինչպես և առաջին երաժշտագետներից, որ փորձել է վերծանել բյուզանդական նեվմերը<sup>9</sup>:

Հավանաբար, խնդրո առարկա ձեռագրի հեղինակ Ա. Ուշգարտաշյանին գրավել են Կիրխերի աշխատության մեջ Արեելքին, հատկապես երրայական և բյուզանդական երաժշտությանը նվիրված մասերը, որոնք նա պատեհ առիթ է համարել՝ արտահայտելու իր տեսակետը հայկական երաժշտության մասին: Մինչ Կիրխերի աշխատության թարգմանությանն անցնելը Ուշգարտաշյանը տալիս է մի առաջարան, որ հիմնականում թարգմանված երկու հեղինակների ամենակարևոր դրույթների համառոտ շարադրանքն է (երկրորդի մասին կխոսվի ստորե): Առավել ուշագրավ են այն մտորումները, որոնք կապված են հայկական երաժշտության հետ, քանի որ դրանք ինքնուրույն են և հիմնված չեն թարգմանական նյութի վրա: Այսպես, հեղինակն իրավամբ նշում է, որ հայերը, ի տարբերություն հույների, ունեն միայն խազերի ցուցակներ, այսինքն՝ «պակասին գիրք արուեստիս»<sup>10</sup>: Ըստ այդմ նշվում է նաև խազանշանների ծագման ժամանակը՝ 500 թ., հավանաբար ենթադրելով, որ հայ զրերի գյուտից հետո կարող էին ստեղծվել նաև հայկական խազանշանները<sup>11</sup>: Ա. Ուշգարտաշյանը դանում է, որ հայկական խազերն այլ ազգերի երաժշտական նշաններից ավելի բարեձեւ ու զեղեցիկ են, մանավանդ, որ անուններն էլ հայկական են: Նա նշում է, որ կան խազեր էլ, որոնց անունները պակասում են, սակայն որոնք նույնպես գործածում են մեր ձեռագրերում: Հեղինակը, գիտակցելով խազերի բանալու կո-

<sup>7</sup> Т. Л. Ливанова и Р. Ю. Виннер, История европейского искусствознания, М., 1963, стр. 162.

<sup>8</sup> Б. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы, стр. 187.

\* Die Musik, Bd. 7, s. 937.

<sup>10</sup> Տե՛ս Վ. Ճեռ. № 1456, Յառաջարանութիւն, էջ 5 թ:

<sup>11</sup> Խման կարծիքներ՝ V—VI դդ. ձայնագրության այրենական համակարգ ստեղծելու մասին եղել են օտար և հայ երաժշտագետների մեջ, մասամբ կապված Ղազար Փարպեցու՝ «Երգողական տառեր» արտահայտության հետ: Նորագույն ուսումնասիրությունները, ճշգրտելով փաստերը, խազանշանների ծագումն ու կիրառումը կապում են VIII—IX դդ. հետ (տե՛ս Հ. Կ. Դամիզյան, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 186—87 и т. д.).

բուստը, մեծ պակասություն է համարում դա և գտնում, որ շնայած մեր խազանշանների բազմաթիվ առավելություններին, այլևս հնարավոր չէ դրանցով որևէ նոր եղանակ գրառել: «Եղանակը աստուածային պաշտա(մա)նց մերոց, են յիրաւի քան զայլ ազդաց եկեղեցական երգոց՝ վսեմք և աստուածավայել, առանց իսկ զործեաց ինչ նպաստից ընկերութեան (թէև երբեմն ընկերեմք զգործիս ինչ՝ զորօրինակ, պէսպէս զծնծղայս, զզանգակս): Բայց չեն միօրինակ յամենայն ուրեք՝ եղանակը երգոց մերոց՝ ի սակս ոչ զոլոց պարփակեալ ցուցակօք խազիցն ըստ լատինացւոց կերպին անխախտ, շափով, որպէս և յունացն ըստ մերս է, ըստ իմիք»<sup>12</sup>: Այստեղ Ուշգարտաշյանը տալիս է և՛ Հայկական հոգենոր երգեցողության գնահատականը, և՛ եկեղեցում օգտագործվող զործիքների անունները, նշելով նաև մեր եղանակների կատարման բնույթը, որ, ի տարբերություն եվրոպական ձայնագրությամբ զրապէտ եղանակների, «անխախտ» ու «շափով» չեն: Նույն կերպ է բնութագրված նաև բյուզանդականը, որովհետև նրանց ձայնագրությունը նույնպես առանց հնգագծի է և այդ առումով նման է Հայկականին: Հեղինակը գտնում է, որ եվրոպական ձայնագրությունը զյուրացնում է երաժշտության ուսուցումը, իսկ Հայկական և բյուզանդական խազանշաններով երգելու համար Հարկավոր է անմիջականորեն ուսուցչից լսել կենդանի երգեցողությունը: Հայկական խազերն ուրվագծում են ավանդական մեղեդու շրջագծերը միայն, և զրանցով երգելու համար երգիշը նախապես զինված պիտի լինի Հայկական ձայնեղանակների բավական բարդ համակարգի քաշիմացությամբ և հանկարծաբանելու ձիրքով<sup>13</sup>: Առաջարանի վերջում հեղինակը փորձում է պատճառաբանել եվրոպական ձայնագրությունը Հայիրականություն ներմուծելու անհրաժեշտությունը: Նշելով հանդերձ, որ Հայկական ութ ձայնեղանակներով երգվում են բոլոր տեսակի, նաև այլազգի մեղեդիներ, նա գտնում է, որ մեր խազանշաններով նորահայտ օտար եղանակներ հնարավոր չեն գրի առնել, որովհետև ինչպես մեր լեզուն է տարբերվում եվրոպական լեզուներից, այնպես էլ արեելյան եղանակներն են տարբերվում արեմտյան եղանակներից<sup>14</sup>:

Առաջարանից հետո Ուշգարտաշյանը շարադրել է մի քանի կետից բաղկացած ներածական բնույթի մի մաս ևս, որ կոչվում է «Բան առ ուսանօղս երաժշտութեան», ուր զործնական բնույթի տարբեր խորհուրդներ են տրրվում ուսանողներին:

Հայկական իրականության մեջ Ուշգարտաշյանը երաժշտության ծաղկումը կապում է Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու անունների հետ, «որոց ի վերայ յօրինելոցն սրանշացեալ մնամք ապշեցեալք, ունելով առաջի զարարս նոցա, բայց թէ որո՞վ արուեստիւ կա(նո)նովք երաժշտութեան շարադրեցին, շունիմք առաջի զայնս»<sup>15</sup> (Նկատի ունի խազերի նշանակությունը բացահայտող ձեռնարկի բացակայությունը):

Խոսելով բազմածայնության մասին և նշելով, որ չորս կամ հինգ ձայնից ավելի լինելու դեպքում այն խճողվում է ու այլևս չի ընկալվում որ-

12 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 6ը.

13 Տե՛ս Հ. Կ. Տագմազյան, Թեորիա մշակում..., ստր. 193—194.

14 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 7ա:

15 Նույն տեղում, էջ 8ա:

պես արվեստ, հեղինակը զտնում է, որ «Գլխաւոր նպատակն ո՛ և իցէ երաժշտութեան՝ է լինելն սիրելի և ախործելի ունկնդրաց, և ո՛չ բնաւ շփոթել զլսելիս և զմիտս լսողաց, աւելի եղանակաւոր մեղեղեօք, որ յառաջ դայ յայսպիսի գործողութենէ»<sup>16</sup>: Աւրեմն, նա նախ և առաջ պարզության կողմակից է և երաժշտության էությունը համարում է մեղեղայնությունը, նշելով, որ «Հակակետի», այսինքն՝ կոնտրապունկտի կամ, լայն իմաստով՝ բազմաձայնության բացակայությունը հայերի և հույների երաժշտական արվեստում բնավ չի նսեմացնում նրանց երաժշտության գեղարվեստական արժանիքը<sup>17</sup>:

Բուն թարգմանական բաժիններից առաջ Ուշգարտաշյանը համառոտակիորեն ներկայացնում է ձեռագրի հետագա նյութերի ամփոփ տեսությունը՝ «Թէ զո՞րոց ճառի ի մատենիս» խորագրով:

Ինչպես վերը նշվեց, Ուշգարտաշյանը թարգմանել է նախ Ա. Կիրխերի աշխատության առաջին երեք գլուխները: Դրանցից առաջինը կրում է ամբողջ աշխատության խորագիրը՝ «Գիտութիւն հանրական երաժշտութեան կամ Մեծի արհեստի համաձայն և տարածայն հնշմանց»: Այս գլխում հիմնականում նկարագրվում են բնական հնշյունները, նրանց ծագումը, բնույթը և հատկությունները: Քննվում է նաև ձայնը որպես ֆիզիկական երևույթ, տարրեր կենդանիների արձակած ձայները, արձագանքի էությունը, լսելու օրգանը և մարդկային ձայնի տարրեր որպեսները: Պետք է նշել, որ Կիրխերի սույն աշխատության աղերսը իր ավագ ժամանակակից, ֆրանսիացի գիտնական և երաժշտության տեսաբան Մարեն Մերսենի հետ նկատելի է հատկապես այս գլխում, որտեղ շոշափված հարցերի շրջանակն ու դրանց դիտարկման սկզբունքը հիմնականում համբնկնում են վերջինիս «Harmonia universalis» աշխատության հետ<sup>18</sup>:

Կիրխերի աշխատության երկրորդ գլխում, որ կոչվում է «Երաժշտական բանասիրություն», խոսվում է բուն երաժշտության, կամ, ինչպես թարգմանված է, «արհեստական հնշման» ծագման, ծավալման, առարկայի ու դասակարգման մասին: Այստեղ դրսեռվում են նաև հեղինակի գեղագիտական հայացքները երաժշտության վերաբերյալ: Նա տարրերում է երևույթի լայն ու նեղ առումները և սահմանում դրանք այսպես. «Երաժշտութիւն լայնաբար առեալ է տարածայն համաձայնութիւն, կամ համաձայն տարածայնութիւն այլ և այլ իրաց՝ առ ի զմի ինչ կացուցանելի զուգընթացք»<sup>19</sup>: Ինչպես տեսնում ենք, երաժշտության լայն առումը Կիրխերը պատկերացնում

16 Նույն տեղում, էջ 9ը:

17 Նույն տեղում, էջ 10ա: Հայտնի է, որ XVII—XVIII դդ. Եվրոպայում բազմաձայնության բուն վերելքի շրջանում, երաժշտական-գեղագիտական լուրջ բանավեճեր են ծագել միաձայնության (մոնողիալի) գեղարվեստական արժանիքների մասին՝ որպես լիարժեք արվեստի, և որոշ գեղագետներ իրենց աշխատություններում հատկապես անզրադաել են այս հարցին՝ ի պաշտպանություն միաձայն երաժշտության: (Տե՛ս, օրինակ, Վ. Պ. Շեստակօվ, Մузыкальная эстетика Западной Европы..., стр. 357):

18 Վ. Պ. Շեստակօվ, Музыкальная эстетика Западной Европы..., стр. 187 и 357.

19 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 32ա: Երաժշտությունը որպես հակադրությունների միանություն դիտում էր դեռևս անտիկ փիլիսոփաներից Հերակլիտը, ըստ որի ներդաշնակությունն առաջանում է հակադրությունների պայքարից: Միջնադարում այս տեսությունը զարգացրին Գրիգոր Նորացին և Բոեցիոսը: (Տե՛ս Վ. Պ. Շեստակօվ, Гармония как эстетическая категория, М., 1973, стр. 28—30, 58, 68):

է որպես հակագրամիասնություն, այսինքն՝ հարցին մոտենում է փիլիսոփայական գիտելիտիկայի ճիշտ տեսանկյունից: Այնուհետև՝ «երաժշտութիւն անձկապէս առեալ կարէ սահմանիլ այսպէս. Երաժշտութիւն է հնչելի ներդաշնակաց յոր և իցէ սեռէ յառաջեկելոց, կամ պատահելոց՝ կատարեալ գիտութիւն»<sup>20</sup>: Սա նշանակում է, որ երաժշտությունը նեղ առումով հեղինակը պատկերացնում է որպես որևէ սեռից (այսինքն՝ հնչյունաշարից) առաջացած ներդաշնակ հնչողություն, սակայն իսկույն ևեթ ճշգրտում՝ «կատարեալ գիտութիւն», որ ցուց է տալիս նրա ուսցիոնալիստական վերաբերմունքը երաժշտության հանդեպ, որը խիստ հատկանշական էր տրվյալ ժամանակաշրջանի համար, հատկապէս ֆրանսիական կլասիցիստների գործերում<sup>21</sup>:

Հեղինակը տեսակների դասակարգմանը միահյուսում է նաև երաժշտության ներդաշնակ ընկալման հարցը, որտեղ ուրույն դեր ունեն և՛ զգացությունը, և՛ գիտակցությունը: Կիրխերը բաժանում է երաժշտությունը նաև տեսականի ու գործնականի: Առաջինի դեպքում երաժշտության մասին դատում ենք միայն խոսքով, իսկ երկրորդի դեպքում՝ սոսկ զգայությամբ, այդ պատճառով էլ հեղինակը նախապատվությունը տալիս է առաջինին. «Որոյ վասն այնչափ ազնուագոյն է տեսականն քան զգործնականն, որչափ վսեմագոյն է զիտութիւն քան զարհեստն»<sup>22</sup>: Արդ, ո՞րն է կատարյալ երաժշտի տիպարն ըստ Կիրխերի. «Ապա կատարեալ երաժիշտ, և ասիլ պարտէ, որ գտեսականն յարակցէ ընդ գործնականին»<sup>23</sup>:

Հնուց ի վեր երաժշտության տեսությունը բարձր է դասվել գործնական երաժշտությունից, այսինքն՝ ձայնով կամ որևէ զործիքով կատարումից<sup>24</sup>, և միայն Վերածննդի շրջանի մտածողներն էին (ի դեմս Զողեփո Յառլինոյի և այլոց), որ կարեւորեցին ոչ միայն երդահանի, այլև կատարող երաժշտի տեսական ու գործնական գիտելիքների և կարողությունների համաշափ զուգակցումը<sup>25</sup>:

Ա. Կիրխերն անդրադառնում է երաժշտության ծագման խնդրին և այս կապակցությամբ՝ երրայական երաժշտությանը, որպես երաժշտական հնագույն օրրաններից մեկի: Հենվելով աստվածաշնչային տեղեկությունների վրա, հեղինակը նշում է, որ երաժշտությունը ծագել է «յառաջ քան զջրհեղին», այնուհետև տալիս է երրայական տարրեր տիպի երաժշտական գործիքների բնութագիրը, որոնցից առաջինը, ըստ Դավիթ Մարգարեի սաղմոսի

20 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 33ր:

21 Պետք է նշել, որ Կիրխերն իր կյանքի զգալի մասն անց է կայրել Յրանսիալում, որով պետք է բացատրել նաև Մ. Մերսենից նրա կրած ազդեցությունը:

22 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 32ր:

23 Նույն տեղում: Բազմակողմանիորեն զարգացած անձի իդեալը հատկանշական էր զեռիս վերանենդի շրջանում (homo universalis) տե՛ս Վ. Պ. Шестаков, Музыкальная эстетика западно-европейского средневековья и Возрождения, М., 1966, стр. 423—24.

24 Ըստ Արքատուելի, երաժշտությամբ «մասնագիտորեն» զրադիլը (այսինքն՝ կատարողական արվեստը) «անազատ արհեստավորների» համար էր նախատեսված (տե՛ս ՄԹ, էջ 203): Քայլակ զիտությունների՝ կվարդիֆիումի մեջ մտնող երաժշտությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հարմենիայի, այսինքն՝ տեսական երաժշտության ուսուցում; (Տե՛ս Յ. Գ. Самодуррова, Школы и образование—Культура Византии, IV-первая половина VII в., М., 1984, стр. 490).

25 Վ. Պ. Шестаков, Музыкальная эстетика западно-европейского..., стр. 423—24.

(Սաղ. 18. 2), տասնադյա սաղմոսարանն է: Ապա, վկայակոչելով միջնադարյան երրայական հեղինակներից Շիլթեին<sup>23</sup>, հեղինակը նշում է, որ «սըրբութիւն սրբութեանցն էին գործարանք երաժշտութեան թուով 30»<sup>27</sup> (հավանաբար նկատի ունի երրայական պաշտամունքային երաժշտական գործիքները) և բերում դրանցից մի քանիսի նկարագրությունն ու անունները:

Այնուհետև Կիրխերը, դարձյալ աստվածաշնչից բերելով մի շարք երաժիշտների անուններ, տալիս է նաև երրայական խազերի ցուցակը, որ բաղկացած է 28 նշանից: Սրանք կանտիլյացիայի<sup>28</sup> նշաններն են, որոնք մեծ մասամբ համընկնում են երրայական հնագույն ցուցակների նշանների հետ, և որոնք հեղինակը բնորոշում է ոչ միայն որպես երաժշտական, այլև առհասարակ առողջական նշաններ:

Աշխատության հաջորդ պրակը վերաբերում է հին հունական և բյուզանդական երաժշտությանը: Հին հույների մեջ երաժշտության ծագումը կապելով առասպելական երաժիշտներ Օրփեոսի, Լինոսի և Ամֆիոնի<sup>29</sup> անունների հետ, Կիրխերը խոսում է նաև ուսպոսպների<sup>30</sup> մասին, բնութագրելով նրանց երգեցողությունը որպես մեղմ ու անուշ միաձայն կատարում, որ երբեմն ընդմիջվում էր սրնզի հնչյուններով: Հին հունական տաղերգուններից Կիրխերն առանձնացնում է Պինդարոսի<sup>31</sup> անունը, որից հետագայում առաջացել է քնարական բանաստեղծության «պինդարիկա» անվանումը և որը բաղկացած է ստրոֆա (տուն), անտիստրոֆա (հակատուն) և էպոդոս (և մեկ տուն՝ տարբեր տաղաշափությամբ), որով ստացվում է օսի կառուցվածքով երեք տուն: Հին հույները սրնզի կամ քնարի նվազակցությամբ պարել են, և նրանց բանաստեղծները նաև երաժշտության և նույնիսկ պարերի հեղինակն էին: Այսպիսով, արձանադրվում է հին հույների երաժշտարանաստեղծական արվեստի սինկրետիկ բնույթը:

Հեղինակն անդրադառնում է նաև բյուզանդական խազերին, որոնցով զրի էր առնվում երգեցողությունը: Հեղինակը նախ տալիս է, այսպես կոչված, «վերելեակ» և «վայրիշակ» խազերը, այսինքն՝ Կուկուզեսյան նշան-

23 XVI դ. ականավոր թալմուդիստ Բարուխ թշուա թեն Սիմոն թեն-Արքահամբ, որի թիվս այլ աշխատությունների, առաջին անգամ կազմել է Թալմուդի մեջ աստվածաշնչային մեջրերումների ցանկը (Տե՛ս Եվрейская энциклопедия, տ. III, стр. 838).

27 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 33ա:

28 Երրայական պաշտամունքային ասերգության Աստվածաշնչի հատվածներից, որոնք կատարվում էին մեղմ ձայնով, ծորուն-աղերսական ոճով: Սրա ամանակային կողմը որոշվում էր տերստի քերականական-տրամարանական շեշտերով, որոնց համակարգը մշակվել է դեռևս 900-ական թվականներին: Տե՛ս ՄԹ, տ. 2, стр. 702:

29 ՏԵ՛Ս «Միֆы народов мира», М., 1980, т. 2, стр. 262 и 55, т. I, стр. 72.

30 Հին հունական թափառական երգիշ-պատմողներ, որոնք երգելով կատարում էին էպիկական պոեմներ, երբեմն լարային գործիքներով նվազակցելով իրենց: Հավանաբար, փողային գործիքը զանց է առնված, որովհետեւ այն միաժամանակ շի կարող զուգորդվել ձայնի հետ, սակայն Կիրխերն այստեղ նշում է հատկապես սրինդը, որը ձայնի հետ փոխն ի փոխ հանդիսացրով, բացահայտում է երգվող մեղեդու երաժշտական հնարավորությունները:

31 Պինդարոս (518—442 թթ. մ.թ.ա.)—հին հունական խմբերգային քնարերգության խոշորագույն բանաստեղծը, որն ստեղծել է տոնական և պաշտամունքային հիմներ (Տե՛ս Փր. Լիօնկեր, Реальный словарь классической древности, М., 1888, стр. 796): Հարկ է նշել, որ Կիրխերը դեռևս 1637—1638 թթ., ճամփորդելով Մալթա կղզում, Սան-Սալվադոր մենաստանի մատենադարանում հայտնաբերում և հրատարակում է Պինդարոսի մի շարք մինչ այդ անհայտ օբյեկտներությունները (տե՛ս Die Musik, Bd. 7, s. 937):

ները<sup>32</sup>, որոնք երկու խմբի են բաժանվում՝ «մարմնոյ» և «ոգոյ»: Սրանք միջին բյուզանդական ձայնագրության «σομάτα» և «ρνευμάτα» կոչվող նշաններն են<sup>33</sup>, որոնցից առաջինները խորհրդանշում են կից Հնչյունների միջև սահուն շարժումը, իսկ մյուսները՝ թոփշքածե շարժումը տերցիա և կվինտա ձայնամիջոցներով: Ապա բերվում են բյուզանդական ութ ձայնեանակների «փոփոխման», այսինքն՝ զարտուղության նշանները, որոնք լիովին համընկնում են բյուզանդական երաժշտության և խաղագրության ժամանակակից հեղինակավոր մասնագետ Վելեշի „The modulation signs“ անվանած նշանների հետ<sup>34</sup>:

Խոսելով բյուզանդական նեվմագրության հիմնական նշանների մասին, Կիրխերը գտնում է, որ «Համբ մեծ նշանքն յունաց այնք են, որք ասեն Հիփոսթագէզը և ցուցանեն, թէ ո՞րքան, և ո՞րշափ ի ձայնս եղանակաւոր երգոց, պարտին յամենալ և երկարել: Համեմատեալ պատասխանն ժամանակաց և միջոցաց, քանակութեանց և որշափութեանց նօթայից լատինացոց, այլև դարձուածոց և փոխարերութեանց հռետորաց, զորս աւասիկ դիցուք յանդիման»<sup>35</sup>: Այսինքն՝ Կիրխերը պատկերացնում էր «Մեծ հիպոսթաղներ» կոչվող նեվմերի նշանակությունը, գտնելով որ դրանք հիմնականում հնչյունի արտարերման կերպն ու ամանակն արտահայտող նշաններ են, որոնց կիրառությունը գործնականում կարելի է սովորել միայն անմիջականորեն՝ ուսուցչի կենդանի կատարումից:

Չեռագրի հաջորդ՝ ութերորդ պրակր վերաբերում է հայկական երաժշտությանն ու խաղագրությանը և պատկանում է Ուշգարտաշյանի գրչին: Այն կոչվում է «Ի վերայ երաժշտութեան, նօթայից, կամ խաղից հնչմանց ձայնից Արամեանց»<sup>36</sup>: Հեղինակը նշում է, որ ըստ Խորենացու, երաժշտությունը հայերի մեջ գոյություն է ունեցել զեռնս հեթանոսական ժամանակներից, երբ երգեր էին հյուսվում արքաների և քաջարիների մասին, որոնք ուղեկցվում էին «թմրկօք, բամբռամբք, տաւզօք, քնարօք, սրնզօք»<sup>37</sup>: Ա. Ուշգարտաշյանը գտնում է, որ մեր ազգն իր նախնի երաժշտությունը վերցնելով մասամբ իրեն սահմանակից երկրներից, առավելապես հույներից ու պարսիկներից, ըստ իր լեզվի ու ձայնի բնույթի և տաղաշափական բանահյուսության կանոնների, համադրելով այդ ամենը «ընդարոյս»<sup>38</sup>, այսինքն՝ տեղում եղած ավանդական երաժշտական մշակույթին և հետզհետե ճոխաց-

<sup>32</sup> Յոհաննես Կուկուզելիս—բուզարական ժազումով բյուզանդացի երգահան և տեսարան (XIII—XIV դդ.), որը բարեփոխեց միջին բյուզանդական նեվմերը, տալով դրանց ձայնամիջոցային և կշռութային որոշակի արժեքները, որոնցով գրանցել է նաև իր սուլդագործությունները (Տե՛ս Egon Wellesz. A history of Byzantine music and hymnography. II հատ., Oxford 1962, p. 284—287. Հայե C. Լազարօս, История на новото писъмо, София, 1965, стр. 47—61).

<sup>33</sup> Egon Wellesz. A history of..., p. 287—291.

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 309—10:

<sup>35</sup> Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 37ր. Այս նշանները վելեշն անվանել է՝ the «Great Hypostases», տես E. Wellesz. A history of..., p. 294.

<sup>36</sup> Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 39ր:

<sup>37</sup> Նույն տեղում:

<sup>38</sup> «Նոր Հայկապյան բառարանն» այս բառը բացատրում է որպես ռանդեալ ի բնէ, բնածին, բնաւորական, ընտանիք և այլն: (Տե՛ս «Նոր բառագիրը Հայկապյան լեզուին», Ա., Վենետիկ, 1836, էջ 765):

նելով, այնպիսի կատարյալ արվեստ ստեղծեց, որ «յամարձակիմք ասել՝ քան զյունաց և զլատինացոցն զեղեցիկս յօրինել զկերպաւորութիւն խազիցն, առ հեշտեաւ կատարելոյ զելմէջութիւն խաղուց և աստիճանաց ձայնից համառօտ միջոցօք ի վերայ միոյ տողի երգոցն, և ոչ հինգ տողով գծից իրեկ զլատինացոցն, և կամ զանազան խաղիւք ի վերայ միմեանց բարդութեամբ, և զի ներքոյ եղեալ ևս տառիւք նոյնոց»<sup>39</sup>: Հեղինակը ուշադրության է հրամիրում մեր խաղերի զեղագիտական կողմի, ապա նաև՝ հարմարության ու հակիրճության վրա, համեմատելով դրանք եվրոպական հնգագծով ձայնագրության ու բյուզանդական նեվմերի հետ, նախապատվությունը տալով հայկական խաղերին: Նույնիսկ իր ժամանակի համար նման կարծիքը միամիտ է հնչում, քանի որ հեղինակը համադրում է զարգացման տարրեր մակարդակների վրա գտնվող երևույթները<sup>40</sup>:

Այնուհետև Ա. Ուշգարտաշյանն ուղղակի անդրադառնում է հայկական խաղանշանների լուսաբանմանը: Նա գտնում է, որ մեր խաղանշանները 40-ն են, որոնցից 24-ն անուն ունեն, իսկ մնացածը՝ ոչ: Անուն ունեցող խաղերը նա կոչում է պարզ և առանձին, բացի երկուսից, իսկ անուն չունեցող 16 խաղերից 12-ը, ըստ նրա, բաղադրյալ են (այսինքն՝ մեկից ավելի խաղերի համակցություն), մնացած 4-ը՝ պարզ: Հեղինակն իրավամբ գըտնում է, որ բաղադրյալ խաղերը հանդիպում են, շարականներից ու տաղերից բացի, հատկապես ստեղինների ու մեղեղինների մեջ, «որք երգին զեղակեալք», այսինքն՝ ձայնոլորումներով հարուստ ծանր տիպի երգերում: Ապա բերվում է վերը նշված խաղերի ցուցակը: Պարզվում է, որ անուն ունեցող խաղանշանները կհամընկնեն Գրիգոր դպիր Գապասաքալյանի առաջարկած ցուցակին<sup>41</sup>, եթե լիներ հետևյալ տարրերությունը. ինչպես հայտնի է, շափականց տարվելով բյուզանդական նեվմերով, վերջինս աշխատել է հայկական «թաշտը» նմանեցնել բյուզանդական «փսօն»-ին, գիտակցելով հանդերձ, որ դրանք տարրեր որակներ ունեն: Այսպիսով, Գապասաքալյանի բերած 24 խաղերից բաղկացած ցուցակում վերոնշյալ «թաշտը» բացակայում է, որի փոխարեն առկա է «երկրութ» կոչվող խաղանշանը<sup>42</sup>: Այսինքըն, եթե անգամ Ուշգարտաշյանը ծանոթ է եղել Գապասաքալյանի աշխատությանը, ապա նրա առաջարկած խաղացուցակը չի կրկնում վերջինիս: Հեղինակի համար առավել հավանական աղբյուր կարելի է համարել զերմանացի անվանի հայագետ Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» գրքում մեջբերված խաղացուցակը<sup>43</sup>, մանավանդ որ քննարկվող ձեռագրում բերված է 9 բաղադրյալ խաղանշան ևս, որոնք ճիշտ նույնությամբ առկա են նաև վերը նշված գրքում<sup>44</sup>:

39 Վ., ձեռ. № 1456, էջ 40ա:

40 Բացի այդ, մեր խաղանշանների ընթերցման արվեստն այդ ժամանակ և դրանից էլ առաջ արդեն անկում էր ապրում. նշելի է թեկուզ և այն փաստը, որ ընդամենը մի քանի տարի անց՝ 1815-ին, Կ. Պոլսում ստեղծվեց հայկական նոր ձայնագրության համակարգը:

41 Գ. Գապասաքալյան, Գրքոյի որ կոչի նուազարան, ե. Պոլս, 1794, էջ 216:

42 Ն. Թամմիզյանի «Հիմնական խաղերի միահեցությունը» (Բ. Մ. № 9, Երևան, 1969, էջ 114 և 121) հոդվածում նշվում է, որ վերոնշյալ խաղը որպես ինքնուրույն խաղանշան չի հանդիպում մեր խաղավոր ձեռագրերում:

43 F. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami 1711, p. 244:

44 Նկատելի է, որ Շրյոդերից փոխ առած վերոնշյալ անանուն խաղանշանները, ըստ ամենայնի, չեն մտնում Ուշգարտաշյանի նշան 40 խաղերի ցուցակի մեջ:

Սրանցից անմիջապես հետո Ուշգարտաշյանը զետեղում է անուն շունեցող 16 խաղանշան ևս, որոնց աղբյուրը, Հավանաբար, հնատիպ շարականներից մեկն է<sup>45</sup>: «Կարգ ութն ձայնից»<sup>46</sup> վերնագրի տակ տալով հայկական ութ ձայնեղանակների հայերեն և լատիներեն անունները, հաջորդ էջում հեղինակը բերում է նաև «Կառաւարք և կարգադրիչը ձայնք»<sup>47</sup> անվանված մի ցուցակ, որ փաստորեն նախորդի լրացված տարրերակն է: Այստեղ ձայները կոչվում են «յատուկ», իսկ կողմերը՝ «անյատուկ»<sup>48</sup>, և բոլոր ութ ձայնեղանակների կրծատ նշանակումներից առաջ հատուկ նշում կա՝ «ր.», այսինքն՝ «բանալի», որ բացատրում է հենց ինքը՝ հեղինակը, զրելով «բ. տառս եղեալ աստեն առ ընթեր ձայնիցն իւրաքանչիւրոցն նշանակէ զրանալին սկսուածոյ ձայնիցն»<sup>49</sup>: Նույն տեղում Ուշգարտաշյանը հանգամանուրեն շարադրում է բանալի խաղերի մասին ունեցած իր պատկերացումները: «Բանալիք ձայնից եղանակաւորացն՝ են ութն ձայնից ցուցակքն. այս է՝ աձ, ակ և ալլն որք ի սկսուածս ամենայն շարականաց կամ երգոց՝ զնեն առ ընթեր ի լուսանցս մատենիցն, զի նորօք կարասցեն երգեցողք միօրինակ՝ ըստ նոցա յատուկ տարագու խաղից և եղանակացն երգել զայնոսիկ, յորում և իցէ պահու, զորս ուսան յուսուցչն կենդանի ձայնիւ և եղանակաւ, վասն զի ինքնին՝ առանց լսելոյ զտարազն ձայնից՝ ոչ է հնար ումեք ուսանիլ զայնս, և եղանակել ըստ այնց, և են թուով բանալիք ութն ըստ ձայնիցն»<sup>50</sup>: Ուշգարտաշյանն, այսպիսով, լիովին զիտակցում էր բանալի խաղերի որոշից զերը խաղադրված նմուշների ձայնավորման համար՝ որպես շափանմուշ եղանակների, առանց որոնց բանավոր իմացության հնարավոր չէր երգել որևէ խաղադրված եղանակ<sup>51</sup>: Ինչ վերաբերում է ստեղի եղանակներին, ապա հեղինակը գտնում է, որ դրանք միշտ հանդես գալով ԴԿ-ին, իսկ երբեմն էլ ԲԿ-ին կամ նույնիսկ ԲԶ-ին կից, տալիս է բառի բացատրությունն այսպես. «որ ասի ստեղի, իբր ունօղ զրագում ստեղունս խաղից եղանակաւորաց...»<sup>52</sup>:

Ուշգարավ է այն, թե ինչ է զրում Ուշգարտաշյանը մեր հոգեուր երգեցողության և ձայնեղանակների մասին. «Թո՛ղ զի և ի սահմանակցաց իւրեանց օտարաց, և ի տէրութեանց որք եկին մտին յաշխարհս մեր, և տիրեցին մերազնեայցս՝ արգելուին զհանդէսս պաշտամանց համարձակ կատարի, ապա այն ջանք ուսման, և զործածութիւն եղանակաւորութեանց սահ-

45 Հարկ է նշել, սակայն, որ Ուշգարտաշյանի ցուցակի վերջին նշանը փոքր-ինչն ազագված է Կ. Պոլսի 1703-ի, ինչպես նաև էջմիածնի 1789-ի հրատարակությունների համեմատությամբ (Համապատասխանաբար՝ էջ 773 և էջ 886):

46 Վ. Մ., ձեռ. Ա 1456, էջ 41ա:

47 Նույն տեղում, էջ 41բ:

48 Այս անգանումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ավտենտիկ ու պլաղալ լաղերի լատիներեն համարժեքների՝ *proprietas* և *im-proprietas*, թարգմանությունը (ան' և «լատինո-րու շաբաթական» լեզվում, Ա., 1976, տթ. 824 և 501):

49 Վ. Մ., ձեռ. Ա 1456, էջ 41բ:

50 Նույն տեղում:

51 Բանալի խաղերի մասին ան՛ Ն. Թամմիզյան, Կոմիտասը և հայկական խաղերի վերծանության խնդիրը, «Պատմա-բանափրական հանդես», 1969, Ա 4, էջ 45:

52 Վ. Մ., ձեռ. Ա 1456, էջ 41բ: Տե՛ս «Նոր բառերը Հայկական լեզուի», Վենետիկ, 1837, հ. 2-րդ, էջ 743 (Մտեղի-բազմաստեղն, բազմաձիւզ, գեղգեղեալ, որպէս մեղեղի, և կամ ստեղեալ երգ՝ հանգստեամբ և հանդարտ նուազելի):

մանեալքն ի նախնեաց՝ ընդ ժամանակս ժամանակս զուցցէ փոփոխեցան, և եղանակը ինչ ինչ խաղիցն ընդ եղանակաց օտարաց խառնեցան, որպէս երեկի ի տեղիս տեղիս լորս ընակեալ են ազդայինք մեր: Սակայն ըստ էականաց ձայնիցն (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.) ո՛չ փոփոխեցան ողջոյն, վասն արձանացեալ՝ կալոյ խաղիցն ի վերայ երգոց, և ի տողս նոցին»<sup>53</sup>:

Հեղինակը դանում է, որ չայած դարերի ընթացքում կրած օտար ազդեցություններին, հայկական միջնադարյան երաժշտության հիմքում ընկած ձայնեղանակները խաղերի շնորհիվ անաղարտ են պահել իրենց հիմնական էությունը:

Համառոտակիորեն մեջրերելով Ա. Կիրխերի աշխատության այն մասը, որ վերաբերում է եվրոպական ձայնադրությանն ու բանալիներին, Ուշգարտաշյանը եվրոպական սոլմիզացիայի նշաններին (Ալ, Բե, Մի, Բա, Տօլ, Լա, Տի)՝ համապատասխան զետեղում է հայերեն վանկերով համարժեքներ՝ «պու, ես, այն, եր, գե, ցիկ, իմ»<sup>55</sup>, անշուշտ՝ ուսուցողական նպատակով, որպեսզի հայ մանուկներին հարմար լինի դրանք արտաբերել: Հարկ է նշել, որ Ուշգարտաշյանը, ըստ երևույթին, փնտրելով հայերեն առավել հարմար համարժեքներ, իր ձեռագրի այլ մասերում նույնիսկ առաջարկում է լադի աստիճանների անունների հայացման ևս երկու տարրերակեց:

Քանի որ վերը նշված գամման ընդհուպ մինչև XVIII դ. սկիզբը կիրառվում էր հարաբերական սոլմիզացիայի օրենքներով, այսինքն, սկսելով այն լադի ցանկացած աստիճանից, այդ իսկ պատճառով ձայնագրության մեջ այդ շրջանում լայն կիրառում ունեին նաև հնդագծի յուրաքանչյուր զծի վրա դրվող բազմապիսի բանալիները, որոնց տարրեր ձևերն ու ըստ այդմ՝ ձայնագրության սկզբունքները տալուց հետո միայն Ուշգարտաշյանը զետեղում է Շրյոդերի զրբում եղած օրհնությունների ութ-ձայն սկսվածքները՝ եվրոպական ձայնանիշներով<sup>57</sup>: (Հարկ է նշել, որ 1800 թ. Շրյոդերի գիրքը դեռևս միակն էր, որտեղ կարելի էր գտնել վերոնշյալ սկսվածքները՝ եվրոպական ձայնագրությամբ<sup>58</sup>): Ապա հեղինակը խոսում է ստեղի ձայնեղանակների սկսվածքների մասին և առաջարկում ԴԿ ստեղիի ձայնագրության երկու նմուշ՝ «Ըստ Գրիգորեան ցուցակաց նօթայից», այսինքն՝ մենզուրալ նոտագրությամբ<sup>59</sup>, երկուսն էլ տեսնորի «Դո» բանալիում, նոտաների տակ բառային տեքստով ու խաղանշաններով հանդերձ:

53 Վ., ձեռ. № 1456, էջ 40ր:

54 Այս անգանումներից առաջին վեցը Գիբոռ Արետինացին (XII դ.) վերցրել է Սր. Հովհանի օրհնության առաջին վեց տողերից, որոնց առաջին վանկերում նա նշել է հերսախորդի աստիճանները: Դրանք հետազայում (XVI դ. վերջում) համալրվեցին յոթերորդ աստիճանով, ինչպես նաև Ալ-ը փոխարինվեց Տօ-օվ (Տե՛ս ՄԹ, տ. 5, ստ. 186—190):

55 Վ., ձեռ. № 1456, էջ 42ր:

56 Երբորդ գլխում, էջ 131: Այս մասին տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց...», հ. 9, էջ 202 (ի դեպ, այստեղ վրիպակ է սպրդել: «Իմ աստ ստացիր»-ի փոխարեն տպված է՝ «Թէ զայս խորհիցիս», որ անցել է Հանդես ամսօրյայից, 1978, էջ 378):

57 Վ., ձեռ. № 1456, էջ 44ա, 44ր: Տե՛ս նաև՝ Շրյոդեր, նշվ. աշխ., էջ 246:

58 Տե՛ս F. Fétis, Histoire générale de la musique, t. IV, Paris, 1874, էջ 69—81.

59 XIII—XVI դդ. եվրոպական օգտագործվող ձայնագրության համակարգ, որ իր նախորդ նոտագրության համեմատ գրառում էր նաև հնչյունի հարաբերական տևողությունը, որն անհրաժեշտ էր բազմաձայնության զարգացման բուռն վերելքի փուլում: (Տե՛ս ՄԹ, տ. 3, ստ. 544—46):

Պարզվում է, որ Կիրխերն իր աշխատության մեջ փորձել է վերծանել բյուզանդական նեվմերը և, որ նրա օրինակով Ուշգարտաշյանն էլ փորձում է վերծանել հայկական խաղերը, սակայն ոչ թե իրեն ժամանակակից եվրոպական ձայնանիշերով, այլ դեռևս Կիրխերի ժամանակներում կիրառվող մենզուրալ նոտագրության հնացած նշաններով, որոնք իրենց հերթին վերծանման կարիք են զգում: Մեջքերման վերջին հատվածը բնութագրում է նաև հաջորդ հոդվածի բովանդակությունը, որը կոչվում է «Ի վերայ ձայնարձակութեանց հնշմանց, արժողութեանց և կիրառութեանց իւրաքանչիր ցուցակացն հայոց մի առ մի, հանդերձ օրինակօք նոցին վարմանց, թէ զիա՞րդ կան, և հնշին ի նուազս երգոցն», ուր Ուշգարտաշյանը բերում է 90 խաղանշաններից բաղկացած մի բնդարձակ ցուցակ էլ: Այստեղ, նախապես իր առաջարկած հիմնախաղերի 24 նշաններից յուրաքանչյուրից հետո, նա տեղադրում է տվյալ խաղանշանի իրեն հայտնի բոլոր տարբերակները, ինչպես նաև բարդ և բաղադրյալ միակցություններն այլ նշանների հետ, ըստ որում սրանցից յուրաքանչյուրի դիմաց զետեղելով մեր խաղավոր ժողովածուներից այնպիսի հատվածներ, որոնցում կիրառված է այդ խաղանշանը<sup>60</sup>: Անուն ունեցող նշաններից առաջ հեղինակը տալիս է նաև դրանց հայատառ լատիներեն անվանումները, իսկ անանուն խաղերի՝ համար առաջարկում պայմանական անվանումներ, որոնք տվյալ խաղանշանի ձեր նկարագրելու բնույթ ունեն: Անհրաժեշտ է նշել նմանատիպ տախտակ-ցուցակի առկայությունը նաև Վիեննայից ստացված մյուս՝ № 1459 ձեռագրի 79—80-րդ էջերում, այն տարբերությամբ, որ այս վերջինում տըրված են միայն խաղանշաններն իրենց անվանումներով, առանց կիրառությունը նշելու, ըստ որում այստեղ, անուն շունեցող խաղերի հայերեն ինքնահնար անվանումներից բացի, հեղինակը տալիս է նաև դրանց հայատառ լատիներեն թարգմանությունները: Պետք է նշել, որ իր ժամանակի համար հեղինակը շահեկան աշխատանք է կատարել, առանձնացնելով, հիմնական ու բարդ խաղերից բացի, նաև բաղադրյալ խաղերը, այսինքն՝ մեկից ավելի տարբեր խաղերի զուգորդումները, և արձանագրելով դրանք հենց կիրառման պահին: Հայ իրականության մեջ, Գրիգոր Գապասաքալյանից հետո<sup>61</sup> Ուշգարտաշյանը փաստորեն երկրորդ երաժշտագետն է, որ զբաղվել է նաև խաղանշանների դասակարգման հարցերով: Ուշագրավ է հեղինակի նշումն այն մասին, որ ա հոդվածի բոլոր խաղերն էլ (այսինքն՝ վերոհիշյալ 40 անուն ունեցող և անանուն խաղանշանները) «գտանին լիով վարեալ, դործածեալ յերգս շարականաց, տաղից, և մեղեղեաց մերոց, զորոց և զձայնարձակութիւնսն հնշմանց ուսեալ, գիտեմք աւանդութեամբք՝ այնշափ և այնքան, ըստ որում վարեմք այժմոցս: Այլ ոչ համարձակիմ ասել՝ այնպէս, որպէս նախնիքն վարէին, որք ստեղծին զիսազս, և զձայնարձակութիւնսն հնշմանց նոցին»<sup>62</sup>: Այս հատվածից պարզ է դառնում, որ Ուշգարտաշյանի երաժշտական գիտելիքները միայն տեսական ոլորտին շէին պատկանում: Նա իր ժամանակի ուսյալ երաժիշտներից է եղել, իմացել մեր շարականների, տաղերի և մեղեղիների իր ժամանակ հայտնի ավանդական եղանակ-

60 Վ., ձեռ. № 1456, էջ 45ր—50ա:

61 Տե՛ս Գ. Գապասաքալյան, Գրքոյն որ կոչի նուագարան, էջ 216—218:

62 Վ., ձեռ. № 1456, էջ 50բ:

ները, ինչպես նաև եվրոպական ձայնագրության սկզբունքները: Մնում է միայն ափսոսալ, որ մեր հեղինակը եվրոպական ձայնանիշերով շի գրանցել իրեն հասած հայկական հնավուրց եղանակները: Ըստ երեսւյթին, Ուշգարտաշյանը շի էլ պատկերացրել, որ հայկական ավանդական եղանակները հնարավոր է դրանցի նաև ժամանակակից եվրոպական ձայնանիշերով: Նա դրանք համարել է բոլորովին տարբեր որակներ ունեցող երեսւյթները<sup>63</sup>:

Սույն բաժնի վերջում հեղինակը զետեղել է հինգ կանոն, որ յուրօրինակ հրահանգներ են հայկական խաղաղրված եղանակներ կատարողին: Այդ կանոնները հիմնականում վերաբերում են հայկական ձայնեղանակներին, նրանց սկսվածքներին և ավարտներին, որոնք հեղինակն անվանում է «փակելակ կամ փակարանք ձայնիցն» և մի անգամ ևս շեշտում, որ դրանց երգեցողությունը կարելի է ճիշտ սովորել միայն ուսուցչի կենդանի կատարումից<sup>64</sup>:

Մրանով ավարտվում է Ուշգարտաշյանի հեղինակած բաժինը, որ վերաբերում էր հայկական երաժշտությանը: Ինչպես արդեն վերը նշվել է, թարգմանիչն այն զետեղել է Ա. Կիրխերի աշխատության երկրորդ գլխի վերջում՝ որպես ընդարձակ հավելված:

Զեռագրի հաջորդ՝ «Դիրք երրորդ: Թուարանական համեմատութիւն երաժշտութեան» խորագիրը կրող բաժնում<sup>65</sup>, որ Կիրխերի աշխատության երրորդ գրքի թարգմանությունն է, խոսվում է հիմնականում թվային համամասնության վրա հիմնված ներդաշնակ ձևերի մասին: Այս գլխում մեծ տեղ է հատկացված բուն մաթեմատիկային, իսկ ձայնամիջոցների մեծությունները կապվում են համապատասխան թվային մեծությունների հարաբերակցության հետ: Կիրխերը երաժշտությանը տալիս է մաթեմատիկական բացատրություններ՝ կցելով բազմաթիվ աղյուսակներ և հաշվումներ: Հեղինակն այստեղ ընկնում է որոշ ծայրահեղության մեջ, շափազանցելով մաթեմատիկական հաշվարկի գերը երաժշտության բնագավառում:

Այս գլխում ուշագրավ է այն բաժինը, որ վերաբերում է երաժշտության ակուստիկական կողմին, իհարկե, ուշ միջնադարի պատկերացումների սահմաններում<sup>66</sup>:

Խնդրո առարկա ձեռագրի վերջին՝ շորրորդ դիրքը կամ գլուխը հիմնականում իտալացի երգահան և երաժշտության տեսաբան Վինչենցո Մանֆրեդինի (Manfredini) «Regole armeniche» աշխատության թարգմանությունն է, որը գրվելով 1775-ին լատիներեն, 1805-ին լույս է տեսել նաև ուսուերեն լեզվով, «Պետերբուրգում»<sup>67</sup>:

<sup>63</sup> Մրա պատճառը նաև հայկական ձայնեղանակների և եվրոպական ձայնագրության միջև եղած անհամապատասխնությունն է՝ վերցինիս տեմպերացված ձայնաշարի և արևելյան բնական ձայնաշարի տարբերությունների հետևանքով:

<sup>64</sup> Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 51ր:

<sup>65</sup> Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 52ա:

<sup>66</sup> Այսուղ ևս նկատելի է ֆրանսիացի դիտնական և երաժշտության տեսաբան Մարեն Մերսենի աղղեցությունը, որը XVII դ. հարստացրեց երաժշտական ակուստիկայի մասին պատկերացումները մի շարք նոր հասկացություններով: Տե՛ս В. П. Шестаков, «Музыкальная эстетика Западной Европы...», стр. 357.

<sup>67</sup> В. Манфредини, «Правила гармонические и мелодические для обучения всей музыки», СПб., 1805.

Մանֆրեդինին սերտ կապեր է ունեցել Պետերբուրգի օպերային թատրոնի և արքունիքի հետ: Հաճախակի լինելով այստեղ, նա ու միայն բարձաստիճան պարատականների երաժշտության ուսուցիչն է եղել, այլև իր խմբի հետ միասին բազմիցս բհմադրել է սեփական օպերային ներկայացումները: Մանֆրեդինին վերը նշված աշխատությունը ուսուցողական-մեթոդական բնույթ ունի և վերաբերում է դործնական երաժշտության մի շարք բնագավառներին: Այն հաղեցած է նոտային բազմաթիվ օրինակներով և վերնագրված՝ «Երաժշտութիւն ըստ արդեաց ոճոյ»<sup>68:</sup> Գիրքը բաղկացած է շորս բաժնից, որոնցից առաջինը կլավիսին և երգեհոն նվազելու սկզբունքների մասին է: Հեղինակը խոսրն սկսում է երաժշտության բնութագրումով. «Երաժշտութիւն է արհեստ համաձայնութեամբ միարանելոյ զալէսալէս հընչմունս ձայնից, այս է՝ զերզո, զմեղեղիս, զներդաշնակս: Երաժշտութիւն կատարելագործի ձայնիւ, կամ ընկերութեամբ զործեաց, և կամ առանց ընկերութեան, որ և կոչի երաժշտութիւն ձայնաւոր, և այն որ կատարի միայն ի ձեռն զործեաց, անուանի երաժշտութիւն զործիրական»<sup>69:</sup>

Ինչպես տեսնում ենք, նախորդ՝ XVII դ. համեմատությամբ երաժշտության բնորոշումը մասամբ փոխվել է. եթե Կիրխերը Շենվում էր զլխավորապես երաժշտության միջնադարյան մեկնաբանման վրա, տալով առավելապես վերացական-հայեցողական բնութագիր, ապա Մանֆրեդինին արգեն մատուցում է երաժշտության ավելի զործնական՝ նոր ժամանակներին հատուկ բնորոշումը:

Աշխատության երկրորդ մասը կոչվում է «Ի վերայ միոյ նոր մեթոդուի վասն ուսանելոյ, և ունելոյ զբամբ հնչիւնն. այս է զպասսօն»<sup>70:</sup> Սա արդեն հարմոնիայի դասագիրը է, որտեղ խոսվում է բարեհնչյուն և անբարեհնչյուն ձայնամիջոցների, ինչպես նաև եռահնչյունների, դոմինանտոնեպտակորզների, նրանց շրջվածքների ու լուծումների, ձայնառության, կադանաների տարբեր տեսակների, զարտուղության և նվազակցության մասին Մանֆրեդինին աշխատության երրորդ մասը կոչվում է «Ի վերայ էական կանոնաց, որք են յոյժ հարկաւորք երգելոյ»<sup>71</sup> և վոկալիստների համար մեթոդական ցուցմունքների բնույթ է կրում: Հեղինակը դանում է, որ երգելն ավելի հեշտ է, քան որեէ զործիք նվազելը, և որ առանց հատուկ երաժշտական կրթության էլ բնական տվյալներ ունեցող յուրաքանչյուր ոք կարող է երբել որեէ մեղեղի, միայն լսելով այն<sup>72:</sup> Սակայն, բացի բնական ձայնական հարմարությունից, հեղինակը դանում է, որ անհրաժեշտ է նաև զիտակ ուսուցչի հսկողություն: Մանֆրեդինին ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ խսկապես լավ երգելու համար բավական չէ երգել միայն բերանով, այլև պարտ է երգել զգացմամբ ու հոգով: Հեղինակը նշում է նաև, որ երգիշը անպայման պետք է բազմակողմանիորեն զարգացած մարդ լինի, կարողանա գեղեցիկ կարդալ բանաստեղծությունն ու դրա միջոցով կրթի իր միտքը և զարդարի հոգին: Եվ ամենակարևորը, երգիշը պետք է հասկա-

68 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 91թ:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, էջ 93ա:

71 Նույն տեղում, էջ 110ա:

72 Անշուշտ, այստեղ նա նկատի ունի երեւութիւն լոկ ձևական կողմը:

նա իր երգածն ու ինքը հուզվի, որպեսզի կարողանա հուզել նաև ունկնդիրներին։ Սրանք պահանջներ են, որ այսօր էլ կարելի է դնել յուրաքանչյուր երաժշտի առաջ։

Մանֆրեդինիի աշխատության վերջին՝ շորրորդ մասը կոչվում է «Եղիսաբետի կանոնաց հակակիտի (քօնթռաբունթօ)»<sup>73</sup>։ Այն պոլիֆոնիայի դասագիրք է, որտեղ քննվում են իր ժամանակի բազմաձայնության տարրեր տեսակները։ Այստեղ նախ բացատրվում են կոնտրապունկտի տեսակները, ապա՝ իմիտացիան, ֆուգան, կրկնակի կոնտրապունկտն ու կանոնը՝ իրենց տարատեսակներով։ Հեղինակը խոսում է նաև երաժշտության սեռերի մասին (արիա, դուետ, տերցետ, սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա, տրիո և այլն), ինչպես նաև օպերայի տեսակների (սերիա, բուֆ) և առհասարակ վոկալ երաժշտության դործիքային նվազակցության բնույթի մասին։ Առանձին պրակ է նվիրված նաև եկեղեցական երգերին և նվազարաններին, որոնք պետք է հնարավորին շափ զուսպ ու շափակոր լինեն, ինչպես վայել է սուրբ տեղին։ Մանֆրեդինին գտնում է, որ հոգեոր երգեցողությանն ավելի պատշաճ է մինոր տոնայնությունը և կատարման լրջությունը։

Հեղինակն ավարտում է աշխատությունն այն մտքով, որ կատարյած երաժշտության խնդիրն է՝ «Հաճել միշտ, և մերձեցուցանել ի սիրաս լուղաց զմեղեղին, կամ զտաղերգութիւն՝ պահելով վարելով անխափան, զորոշեալ և զպայծառ ներդաշնակ»<sup>74</sup>։ Խոսքը հոմոֆոն-հարմոնիկ ոճի երաժշտության մասին է, որի հիմնական արտահայտչածները Մանֆրեդինին համարում էր տպավորիչ մեղեղին՝ զուզակցված դործիքային ներդաշնակ նվազակցությամբ։ Հարկ է նշել, որ ամբողջ աշխատությունը հազեցած է նոտային բազմաթիվ օրինակներով։

Մանֆրեդինիի սույն աշխատությամբ եզրափակվում է քննարկվող ձեռագրի բուն թարգմանական բաժինը, որին հետևում է մի ստվար բաժին ևս։ Սրա առաջին գլուխը կոչվում է «Նշանագրական ազդեցութիւնը ի վերայ երաժշտութեան»<sup>75</sup>։ Այն ծավալուն շարադրանք է, որն արդեն թարգմանություն չէ, սակայն լիովին ինքնուրույն նյութ էլ չի կարելի համարել. սա 44 կետից բաղկացած բացատրությունների մի փոքր է, որտեղ շոշափվում են նախընթաց նյութերից կարեռած տարրեր հարցեր։

Չեռագրի վերջին բաժնի մյուս գլուխը կոչվում է «Բովանդակութիւն երաժշտական գիտութեան։ Հանդերձ ամենայն էական, և պատահական հանդամանօրն, ըստ պատշաճի կարգեալ, և դասաւորեալ հակիրճ, և մէկն բանիք երաժշտ վարդապետաց։ Յորում առաջին գնին սահմանք, և բաժանմունք մասանց նորա և կանոնը։ Որք առ գործածութիւն, և կազմութիւն եղանակաց շարականաց երգոց, տաղից, ցցոց և մեղեղեաց, եթէ ձայնականի և եթէ գործիքականի՝ են պիտանի. և հարկաւոր»<sup>76</sup>։ Վերնագրից երեսում է, որ այդ բաժինը նույնպես հավաքական է, այսինքն, հիմնված է նախորդ երկու հեղինակներից կատարված թարգմանությունների վրա։ Սկսած երա-

73 Վ. Մ., ձեռ № 1456, էջ 118ա:

74 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 141թ:

75 Նույն տեղում, էջ 142ա:

76 Նույն տեղում, էջ 159ա:

ժըշտության բնորոշումից, Ուշգարտաշյանը համադրում է Կիրխերի և Մանֆրեդինիի սահմանումները, հետևություններ անելիս հենվելով առավելապես վերջինիս վրա:

Ամրող ձեռագիրն ավարտվում է «Ի վերայ տարազու երաժշտութեան Արեւելեաց և Արեմտեացց, և թէ ո՞րով տարբերին ի միմեանց»<sup>77</sup> խորագրով 19 կետից բաղկացած վերջաբանով, որ պարունակում է առանց հնգագծի ձայնագրության և եվրոպական ձայնագրության հակիրճ համադրությունը: Հեղինակը նշում է, որ հայերը, շունենալով բազմաձայնություն, իրենց եկեղեցական երաժշտության մեջ, հատկապես տոն օրերին, դործածում են որոշ նվազարաններ, դրանով նմանվելով արևմտյան ազգերին, ի տարբերություն հույների, որ ոչ մի դործիք շեն օգտագործում իրենց եկեղեցում: Ուշգարտաշյանը գտնում է, որ շնայած արևելյան եկեղեցում օգտագործում են բամբ (բաս) հնչյունով, սամկորեն ասած «տէմ քաշել»-ը, այսինքն՝ ձայնառությունը, սակայն դա իր արվեստով շի կարելի համեմատել հակակետի, այսինքն՝ կոնտրապունկտի հետ: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ շնայած մեր ազգը շունի եվրոպական ձայնագրության ձայնանիշերը<sup>78</sup>, սակայն մեր ութ ձայնեղանակները պարունակում են եվրոպական լազերի բոլոր աստիճանները:

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև Ուշգարտաշյանի մյուս՝ «Գիրք երրորդ, պատկերաց տեսական եւ գործնական երաժշտութեան» ձեռագրին<sup>79</sup>, որ կոչվում է նաև «Տախտակ սկզբանց երաժշտութեան»: Սա Վիեննայի մատենադարանի «Գիրք պատկերաց Ա.-Դ» ձեռագրի երրորդ մասն է, որ կրում է «Գիրք Պատկերաց Մաթէմաթիքական ուսմանց, Գործնական երկրաշափութեան, երաժշտութեան եւ կանոնական կտրութեանց» խորագիրը<sup>80</sup>: Այս մատյանի ստեղծման ժամանակը 1780—1781 թթ. են, սակայն ուշագրավ է այն, որ մեզ հետաքրքրող՝ երրորդ մասն ստեղծվել է մոտ քան տարի անց՝ 1800 թվականին, այսինքն՝ երաժշտության մասին վերը քըննարկված ձեռագրից անմիջապես առաջ: Այստեղ ամփոփված են նոտացին օրինակներ՝ հակիրճ բացատրություններով, որոնք վերաբերում են հիմնականում Վիեննցո Մանֆրեդինիի աշխատությանը: Սակայն վերջին էջերում Ուշգարտաշյանն անդրադառն է հայկական խազերին ևս, որ արդեն լուսաբանվել է իր տեղում: Մնում է ավելացնել, որ այստեղ Ուշգարտաշյանը զետեղել է նաև օրհնությունների ութ ձայն սկսվածքները՝ խազանշաններով հանդերձ, ինչպես նաև մի շարք ստեղի ձայնեղանակների խազագրված սկսվածքներ: Այս ամենը հեղինակը կոչում է «Բանալիք երաժշտական երգաբանութեանցն Հայոց»<sup>81</sup>, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նշված է՝ վսեմ (սովորանո), այսինքն՝ սոպրանոյի բանալի, ստեղիներից մեծ մասի դիմաց

77 Նույն տեղում, էջ 200ր: Արեւելեայք ասելով հեղինակը նկատի ունի բյուղանդացիներին և հայերին, իսկ արեմտեայք ասելով՝ եվրոպացիներին:

78 Ուշգարտաշյանն ակնարկում է այն հանգամանքը, որ հայկական խազանշանները շեն արտահայտում ձայնաշարի առանձին աստիճանները՝ իրենց բարձրությամբ և տեղողությամբ:

79 Վ. Մ., ձեռ. 1459, էջ 54ա—77ր:

80 ՏՎԱ «Յուցակ հայերէն ձեռագրաց» Դ, էջ 210—11, նաև՝ «Հանդես ամսօրյա», 1978, էջ 393—96:

81 Վ. Մ., ձեռ. № 1459, էջ 75ա:

նշված է՝ մեղմ (քենօր), այսինքն՝ տենորի բանալի, իսկ ստեղի մեղեղին, բայ Ուշդարտաշյանի, ընթանում է բամբ (պասօ), այսինքն՝ բասի բանալիում։ Բայ երևոյթին հեղինակն այստեղ<sup>82</sup>, ինչպես նաև վերը քննարկված մյուս ձեռագրում, նկատի ունի զրառվող երաժշտական նյութի ավելի հնամասային (ուղիսար), քան հնչերանդային (տեմբր) հատկանիշը, քանի որ, ինչպես հայտնի է, հայկական եկեղեցական երաժշտությունն ընդհանրապես կատարում էին տղամարդիկ, հետևաբար և շարականների հընչման ձայնածավալը հիմնականում ամփոփվում էր լիրիկական բարիտոն և տենոր ձայների ձայնածավալի սահմաններում<sup>83</sup>։ Այսպես որ Ուշդարտաշյանը պարզապես փորձում է որոշ համապատասխանոթյուն մտցնել հայկական ութ ձայն սկսվածքների ու ստեղիների և եվրոպական ձայնագրության՝ իր ժամանակ տարածված բանալիների միջև։ Ընդհանրապես, սույն աշխատությունը հիմնականում թարգմանական լինելով, ավելի ուսումնակրթական բնույթ է կրում։ Թարգմանելով նախ՝ իրեն նախորդող ժամանակաշրջանի հեղինակներից մեկի՝ Աթանազիոս Կիրիսերի, երաժշտատեսական աշխատության երեք զլուխները, այնուհետև իր ավագ ժամանակակցի՝ Վիճակնցո Մանֆրեդինիի դասագիրքը, որ վերաբերում է երաժշտության առավել գործնական մի շարք բնագավառների, Ուշդարտաշյանն, անշուշտ, մի կարևոր նպատակ էր հետապնդում։ Եվրոպական երաժշտագիտության և երաժշտության նախնի և արդի նվաճումները աստիճանաբար ներմուծել հայկական շրջանակները, զրանով իսկ լայնացնելով հայ պատանիների երաժշտական մտահորիդունը։ Սակայն ամենից արժեքավորն այստեղ, իհարկե, հայկական խաղաղության և հոգեոր երգեցողության մասին գրված ինքնուրույն ներդիրն է, որ կարևորում է Ուշդարտաշյանի դերը նաև որպես շարականագետ-երաժշտագետի, որը քաջատեղյակ էր հայ միջնադարյան երաժշտության և հատկապես հոգեոր երգեցողության հարցերին թե՛ տեսական, և թե՛ գործնական առումով։ Հատկապես ուշագրավ են հեղինակի պրագտումները հայկական խաղերի ասպարեզում, որոնց վերաբերող ընդարձակ ցուցակը՝ կիրառության տեղիների մեջըերմամբ, նկատառնելի երևոյթ էր խաղաղիտության մեջ<sup>84</sup>։ Հետևաբար, եթե Գ. Գալասսաքալյանը մինչ այժմ համարվում էր առաջին հայ հետազոտողը, որն անդրադարձել է խաղերի բարդույթին, ապա այսուհետև Ա. Ուշդարտաշյանը նույնպես պետք է համարվի հայագի առաջին հետազոտողներից մեկը, որ զրադիմ է խաղերի բարդույթով, համարյա Գալասսաքալյանի հետ միաժամանակ։ Ինչ վերաբերում է խնդրո առարկա ձեռագրին ամբողջապես (որպես զիտաթարգմանական աշխատություն), ապա այն, որպես եվրոպական երաժշտության հիմունքների և ձայնագրության տեսական ու գործնական դասագրքերի ժողո-

82 Նույն տեղում, էջ 75թ-76ա:

83 Տե՛ս Ն. Ա. Թահմիզյան, Զայնի մասին ուսմունքը հին և միջնադարյան Հայաստանում, Բ Մ, 1962, Խ 6, էջ 157։

84 Հարկ է նշել, որ Գ. Գալասսաքալյանի՝ խաղարանական պրագտումները պարունակող երեք գրքերից երկուսը լույս են տեսել Ուշդարտաշյանի սույն ձեռագրից հետո՝ 1801-ից 1803-ին, և միայն առաջինն է, որ լույս է տեսել 1794-ին։

վածու, հավանաբար, առաջինն է հայ իրականության մեջ<sup>85</sup>. Համենայն դեպս, հայ երաժշտագիտությանը դեռևս հայտնի չէ տվյալ ժամանակին զերաբերող նմանատիպ մի այլ օրինակ:

Հատկանշական է այն փաստը, որ Ուշգարտաշյանն ավարտում է աշխատությունը, համադրելով հայկական երաժշտության հիմունքները և վրոպականի հետ և, նշելով հանդերձ նրանց ունեցած սկզբունքային տարրերությունները, փորձում է որոշ կետերում ընդհանրության եզրեր գտնել դրանց միջև, այլ կերպ ասած, հեղինակը կամուրջ է ձգում երկու տարրեր երաժշտական մշակույթների միջև, եվրոպական երաժշտության նվաճումները հայկական երաժշտական ասպարեզ ներմուծելու նպատակով: Ճիշտ է, Ուշգարտաշյանի սույն աշխատությունը ժամանակին չի տպագրվել (*Scriba-  
stus et Ubi hibit armenianus* միաբանության նյութական սույն հնարավորությունների պատճառով), սակայն դեռևս 1911-ին՝ միաբանության հիմնադրման 100-ամյակի առթիվ Վիեննայում լույս տեսած «Յուշգարծան» գրական ժողովածուն հատկապես նշում է Անտոն Ուշգարտաշյանի սույն երաժշտագիտական աշխատությունը՝ որպես հմտությամբ գրված և հանիրավի անտիպ մնացած մի գործ: Այսպիսով, Անտոն Ուշգարտաշյանի երաժշտագիտական-թարգմանական քննարկված աշխատությունը կարելի է համարել *Միսիթարյան* գույգ միաբանությունների ծավալած կրթական-լուսավորական շարժման ուշգրավ արտահայտություններից մեկը՝ երաժշտության ընազավորում:

Ա. Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

## РУКОПИСЬ ВЕНСКОГО ХРАНИЛИЩА «КНИГА ПО МУЗЫКЕ», КАК ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВАЯ МУЗЫКОВЕДЧЕСКАЯ РАБОТА

### Резюме

Статья посвящена исследованию рукописи № 1456 и относящегося к музыке раздела рукописи № 1459, которые хранятся в библиотеке мхитаристов в Вене. Обе рукописи принадлежат перу члена Триестской конгрегации Антона Учгарташяна и выполнены в 1800—1801 годах. Первая рукопись рассматривается в статье как позднесредневековое исследование по музыке, состоящее из переводного и оригинального разделов, а вторая—является нотным приложением к ней.

85 Ի՞նարկե, չհաշված 1711-ին Խաչատուր էրգրումեցու «Համառոտական իմաստափրութիւն» մեծածավալ աշխատության մեջ երաժշտության հարցերին նվիրված երկու գլուխներից՝ «Տակախին յաղագս սահմանի երաժշտութեան» գլուխը, որ թեպետ եվրոպական երաժշտության սկզբունքների մասին է, սակայն ընդամենը 55 տողից բազկացած շափածո շարադրանք է, որ միայն տեսական ընդհանուր մի տեղեկություն կարող է տալ եվրոպական երաժշտության մասին, այլ ոչ երբեք՝ գործնական որևէ պատկերացում հաղորդել, մանավանդ ձախագրության, բազմաձայնության և դրանց հետ կապված այլևան հարցերի մասին (և. էրգրումեցու աշխատության երաժշտագիտական հատվածի մասին տե՛ս նաև ն. Թամմիզյանի «Խաչատուր էրգրումեցին որպես հայ երաժշտության տեսարան» հոդվածը՝ լ29, Խ 11, էջ 66—74):

A. D. VARDOUNIAN

LE MANUSCRIT „LIVRE DE MUSIQUE“ DE LA BIBLIOTHEQUE  
DE VIENNE, OEUVRE MUSICOLOGIQUE DE LA FIN  
DU MOYEN AGE

R é s u m é

L'article est consacré à l'étude du manuscrit no. 1456 et de la partie du manuscrit no. 1459, conservés à la Bibliothèque des Mkhitaristes de Vienne. Ces deux manuscrits sont dus à la plume d'Anton Outchgarnachian, membre de la Congrégation de Trieste et ont été écrits en 1800—1801. Le premier manuscrit examiné est une étude sur la musique de la fin du Moyen Age constituée de deux parties: l'une originale, l'autre traduite de l'allemand ou du latin. Le second manuscrit est un appendice constitué de textes musicaux en notation européenne.